ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2024 թվականի թիվ 55-Ա

ք.Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, նույն հոդվածի 4-րդ մասը և հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազություն 2024 թվականին մայիսի 15-ին հասցեագրված թիվ Ե/01/04.1/392-24 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***՝

1. Կասեցնել «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ 2024 թվականի մայիսի 14-ին հարուցված թիվ 24 վարչական վարույթը մինչև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի թիվ Ե/01/04.1/392-24 գրության հիման վրա ՀՀ գլխավոր դատախազության կողմից համապատասխան գործողությունների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. մայիսի 23
ք.Երևան